ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք,
5-փ 7, Հեռ. 2-42-26 , norik.melkonyan@mail.ru

N 1/89
14 ապրիլ 2018թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2018 թվականի ապրիլի 11-ին կայացրած թիվ 12-Ա որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Կատ՝ Մ. Կարապետյան
Հեռ՝ 098-29-30-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ապրիլի 2018 թվականի N 12-Ա

ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջների,ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի ապրիլի 7-ի N 01/12.2/1566-18 գրության և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի մարտի 29-ի N 29.6 [444295]-18 հանձնարարականի՝

որոշում եմ՝

1. <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում 2018 թվականի ապրիլի 14-ին, մայիսի 5-ին, հունիսի 16-ին, օգոստոսի 18-ին և հոկտեմբերի 20-ին Ողջաբերդ համայնքում իրականացնել համայնքային շաբաթօրյակ:
2. Շաբաթօրյակի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով ներգրավվել համայնքի բնակիչներին և համայնքի տարածքում գործող բոլոր կազմակերպությունների հնարավորություններն ու միջոցները:
3. Հանձնարարել համայնքի տարածքում գործող կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) ղեկավարներին շաբաթօրյակի միջոցառումների շրջանակներում մաքրել, բարեկարգել իրենց կազմակերպության տարածքը և հարակից շրջակայքը:
4. Հանձնարարել Ողջաբերդի համայնքապետարանի աշխատակազմին համապետական շաբաթօրյակի օրը կազմակերպություններին ապահովել անհրաժեշտ տեխնիկայով, գործիքներով և նյութերով:
5. Շաբաթօրյակի անցկացման և կատարման աշխատանքների ծանուցման և դրանց նկատմամբ հսկողության իրականացումը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Մ. Կարապետյանի վրա:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2018 թ. ապրիլ 11
գ.Ողջաբերդ